


*ՀՀ 2011 թ. մարդահամարի նախապատրաստման և անցկացման
համապետական հանձնաժողովի նիստ*

**ՀՀ 2011 թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 12-21- Ն
ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ
ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՎԻՃԱԿԸ
ՀՀ ՄԱՐԶԵՐՈՒՄ և Ք.ԵՐԵՎԱՆՈՒՄ՝
ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ
ՆԱԽԱՇԵՄԻՆ**

ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն

3-Ը ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2011 ԹՎԱԿԱՆ

**ՀՀ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՅՄԱՆ
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ
(ՄԱՐԴԱՀԱՄԱՐԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԵՎ ԱՄՓՈՓՄԱՆ
5 ՀԱՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (I-V))**



ՀՀ 2011թ. մարդահամարի կազմակերպական պլանները

- Կազմվել և հաստատվել են ՀՀ մարզերի և Երևան քաղաքի ՀՀ 2011թ. Մարդահամարի նախապատրաստման և անցկացման կազմակերպական պլանները՝ ըստ տարածքների և վարչական շրջանների (թվով 61), որոնք խարսխված են քաղաքների և 5000 ու ավել բնակչություն ունեցող գյուղերի սխեմատիկ հատակագծերի և տների/շինությունների ցուցակագրման տվյալների, մնացած գյուղական համայնքների մասով՝ գյուղական համայնքների կողմից ներկայացված տնային տնտեսությունների ցուցակների և վարչական շրջանների քարտեզների վրա:

ՀՀ 2011թ. Մարդահամարի ժամանակավոր աշխատակազմ

- Ավարտված են ՀՀ 2011թ. մարդահամարի տվյալների հավաքագրման համար ժամանակավոր անձնակազմի՝ մարդահամարի տեղամասի վարիչների և օգնականների (364), հրահանգիչ-հսկիչների (2425), և հաշվարարների (12124), աշխատանքի ընդունման գործառույթները ՀՀ տարածքում:
- Հավաքագրված անձնակազմի ուսուցման/հրահանգավորման աշխատանքներն ավարտված են տեղամասի վարիչ/օգնականների (սեպտեմբերի 10-ի դրությամբ) և հրահանգիչ-հսկիչների (սեպտեմբերի 25-ի դրությամբ) մասով:
- Արդեն 3-րդ օրն է (ներառյալ շաբաթ, կիրակի) սկսված են հաշվարարների (որոնք մեկ ամիս ժամկետով աշխատանքի են ընդունված ս.թ. հոկտեմբերի 1-ից)՝ ըստ փուլերի ուսուցման/հրահանգավորման աշխատանքները, ինչը նախատեսվում է ավարտել մինչև ս.թ. հոկտեմբերի 7-ը:

Հաշվարարների թեկնածուներ

Վարձված հաշվարարների մեջ համայնքապետերի կողմից ներկայացված թեկնածուներից վարձվածների տեսակարար կշիռը կազմել է.

- Արագածոտնի մարզում -98%
- Արարատի մարզում -97%
- Արմավիրի մարզում - գյուղերում` 90%, քաղաքներում` 30%
- Գեղարքունիքի մարզում -90%
- Լոռու մարզում -95%
- Կոտայքի մարզում -95%
- Շիրակի մարզում -100%
- Սյունիքի մարզում -100%
- Վայոց ձորի մարզում -100%
- Տավուշի մարզում -100%
- Ք.Երևանում - 30 %

Համայնքապետերի կողմից ներկայացված բոլոր թեկնածուները վարձվել են, բացառությամբ Գեղարքունիքի, Լոռու և Կոտայքի մարզերի, որոնցում թեկնածուների, համապատասխանաբար, 10 %, 5 % և 5% չեն բավարարել հաշվարարներին ներկայացված որակական (հատկապես` կրթական) պահանջներին, Լոռու մարզում նաև թեկնածուների անձնագրերի վավերականության ժամկետների անբավարարության պատճառով: Մնացյալ տարբերությունները հետևանք են համայնքապետերի կողմից թեկնածուների չներկայացման:

Հաշվարարների պայուսակների և մարդահամարի նյութերի բաշխումը

- Ս.թ. սեպտեմբերի 29-ից հոկտեմբերի 2-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ մարզերով բաշխվել են հաշվարարների պայուսակները, որոնք մինչ հոկտեմբերի 11-ը կբաշխվեն ըստ մարդահամարի և հրահանգչական տեղամասերի:
- Մարդահամարի դաշտային աշխատանքների կազմակերպման համար բոլոր անհրաժեշտ նյութերը (թվով 58 տեսակի փաստաթուղթ), ներառյալ ՀՀ 2011թ. Մարդահամարի հարցաթերթը, դրա լրացման հրահանգը, հուշատետրեր, ամփոփ տեղեկագրեր, վերահսկողական փաստաթղթեր և այլ հաշվետվական ձևեր, նախատեսված ՀՀ ԱՎԾ մարզային գործակալությունների, մարդահամարային բոլոր աշխատակիցների համար ամբողջությամբ բաշխվել են՝ ընդհուպ մինչև հրահանգիչ-հսկիչը:

Հաշվառման առանձնահատուկ դեպքերի կազմակերպում

- ՀՀ արտաքին գործերի նախարարի և ՀՀ ԱՎԾ նախագահի համատեղ հրամանով հաստատվել է՝ «Օտարերկրյա պետություններում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություններում և հյուպատոսական հիմնարկներում ծառայող ՀՀ դիվանագետների և նրանց հետ համատեղ բնակվող ընտանիքի անդամների հաշվառման կարգը»: Միաժամանակ հաստատվել է «ՀՀ 2011 թվականին մարդահամարի անցկացման ժամանակ օտարերկրյա պետություններում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություններում և հյուպատոսական հիմնարկներում ծառայող ՀՀ դիվանագետների եվ նրանց հետ համատեղ բնակվող ընտանիքի անդամների հաշվառման և մարդահամարի հարցաթերթի լրացման ուղեցույցը»: Վերջինիս էլեկտրոնային տարբերակը, ինրչպես նաև անհրաժեշտ քանակությամբ մարդահամարի հարցաթերթեր տրամադրվել են ՀՀ արտաքին գործերի նախարարության կողմից նշանակված պատասխանատուին:

Հաշվառման առանձնահատուկ դեպքերի կազմակերպում

- ՀՀ պաշտպանության և ՀՀ արդարադատության նախարարների, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության պետի և ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրենի, ՀՀ ԱՎԾ նախագահի՝ « ՀՀ 2011 թվականի մարդահամարի ժամանակ բնակչության առանձին խմբերի (զինծառայողներ, ձերբակալվածներին պահելու վայրերում և քննչական մեկուսարաններում գտնվող, քրեակատարողական հիմնարկներում պատիժը կրող անձինք) հաշվառման կարգը» հաստատող համատեղ հրամանը: Ներկայումս աշխատանքներ են տարվում հիշատակված խմբերի անձաց հաշվառման գործառույթները կազմակերպելու և իրականացնելու ուղղությամբ:
- ՀՀ ոստիկանությունն ի աջակցություն ՀՀ 2011թ. Մարդահամարին տրամադրել է Երևան քաղաքի վարչության և ՀՀ ոստիկանության մարզային վարչությունների ստորաբաժանումների ղեկավար կազմի ծառայողների հեռախոսահամարների ցուցակը, որոնց միջոցով հաշվարարները և մարդահամարի ժամանակավոր այլ աշխատակիցները կարող են ըստ անհրաժեշտության դիմել և ստանալ համապատասխան աջակցություն:

**ՀՀ 2011թ. Մարդահամարի նպատակով մարզերում և
Երևան քաղաքում տրամադրվել են ժամանակավոր
աշխատասենյակներ (ապահովվել է պահանջված ողջ քանակը)**

	Մարդահամարի տեղամաս՝ սեպտեմբերի 1-ից, <u>2.5 ամիս</u>	Հրահանգչական Տեղամաս՝ սեպտեմբերի 15-ից, <u>1.5 ամիս</u>
Ք.Երևան	55	733
Արագածոտնի	8	104
Արարատի	18	201
Արմավիրի	16	203
Գեղարքունիքի	15	173
Լոռու	17	196
Կոտայքի	15	195
Շիրակի	17	195
Սյունիքի	10	105
Վայոց ձորի	3	41
Տավուշի	8	97
Ընդամենը	182	2243

Հասցային տնտեսության վիճակը

ՀՀ ԱՎԾ մարզային գործակալությունների պետերի տրամադրած տեղեկատվությամբ (ըստ մարզպետարանների տվյալների) ս.թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ՝ ՀՀ համայնքներում փողոցների անվանացույցերի և շենքերի համարանիշերի տեղադրման աշխատանքները ձեռք են բերել հետևյալ պատկերը (*տոկոսային արտահայտությամբ համադրելով ցուցակագրման տվյալներին*)

- Արագածոտնի մարզում -99%
- Արարատի մարզում -99%
- Արմավիրի մարզում - 99% գյուղերում, 80 % քաղաքներում
- Գեղարքունիքի մարզում -95%
- Լոռու մարզում -90%
- Կոտայքի մարզում -90%
- Շիրակի մարզում -80%
- Սյունիքի մարզում -95%
- Վայոց ձորի մարզում -98%
- Տավուշի մարզում -80%
- Ք.Երևանում - 60%

Աշխատանքներն ընթացքի մեջ են:

ՀՀ 2011թ. Մարդահամարի իրազեկման և զանգվածային բացատրական աշխատանքներ

1. Երևան քաղաքում և հանրապետության խոշոր մայրուղիներում ս.թ. սեպտեմբերի 16-ից տեղադրվել են յուրաքանչյուրը 18 քառ.մ մակերեսով՝ թվով 20 գովազդային վահանակներ հետևյալ հասցեներում.

Ք. Երևան՝

- Խանջյան փողոց (Մանկավարժական համալսարանի դիմաց)
- Հերացու փողոց (Նորք-Մարաշ տանող ճանապարհի հատվածում)
- Պարոնյան - Մաշտոց հատում
- Տ. Պետրոսյան 2,
- Սասնա Ծռեր փողոց՝ *երկկողմանի*
- Ռուբինյանց 1
- Աճառյան փողոց(Բաբաջանյան խաչմերուկից 100մ դեպի Առինջ)
- Ազատություն-Մամիկոնյանց հատում՝ *երկկողմանի*
- Իսակովի պողոտա (Օդանավակայանի ճանապարհ)՝ *երկկողմանի*
- Երևան-Աշտարակ-Գյումրի 17րդ կմ, երկկողմանի
- Երևան-Արարատ-Մեղրի 26.5րդ կմ, երկկողմանի
- Երևան-Սևան-Իջևան 19.1րդ կմ
- Երևան-Սևան-Իջևան 36.2րդ կմ
- Երևան-Սևան-Իջևան 41.5րդ կմ
- Երևան-Սևան-Իջևան 55.3րդ կմ

ՀՀ 2011թ. Մարդահամարի իրազեկում *(շարունակություն)*

2. Տպագրվել և բաշխվել են ՀՀ 2011թ. Մարդահամար լուսաբանող 19600 պաստառներ, ինչպես նաև բրոշյուրներ:
3. Նկարահանվել է գովազդային տեսահոլովակ մուլտֆիլմի ձևաչափով, որը հեռարձակվում է հոկտեմբերի 1-ից Հանրային (օրը 1 անգամ), Հ 2 (օրը միջինում 6 անգամ) և Արմենիա (օրը 1 անգամ) հեռուստաալիքներով մինչև հոկտեմբերի 18-ը *(հեռարձակման գրաֆիկը հավելվածի տեսքով ներկայացված է ստորև)*:
4. Նկարահանվել է հաղորդման ձևաչափով իրազեկման հոլովակ, որը կցուցադրվի Հ 2 հեռուստաալիքով (2 անգամ):
5. ԱՄՆ Հաշվառումների բյուրոյի փորձագետների աջակցությամբ պատրաստվել և տպագրվել են դպրոցական ուղեցույցեր և ՀՀ կրթության և գիտության նախարարի հետ ձեռք բերված հանաձայնությամբ հոկտեմբերի առաջին տասնօրյակում կիրականացվեն ՀՀ 2011թ. Մարդահամարի իրազեկման դասընթացներ՝ խաղերի և հանդեսների ձևաչափով, 4-րդ և բարձր դասարանների աշակերտների շրջանում:
6. ՀՀ փոխվարչապետի աջակցությամբ (գրություններով) դիմվել է ՀՀ բջջային 3 խոշոր օպերատորներին՝ մարդահամարից առաջ և ընթացքում, ԱՄՆ Հաշվառումների բյուրոյի փորձագետների կողմից կազմված տեքստերով, հյաղորդագրություններ (SMS) ուղարկելու բջջային բոլոր բաժանորդներին (ըստ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովից ստացված պաշտոնական տեղեկատվության՝ ս.թ. հուլիսի 1-ի դրությամբ ՀՀ տարածքում ակտիվ բջջային հեռախոսահամարների քանակը կազմել է 3 մլն. 945 հազ. 416)

ՀՀ 2011թ. Մարդահամարի իրազեկում (շարունակություն)

7. ՀՀ փոխվարչապետի աջակցությամբ (գրություններով) Հայ Առաքելական Եկեղեցին արձագանքել է մարդահամարի իրազեկմանը օժանդակելու խնդրանքին և ս.թ. սեպտեմբերի 28-ին Էջմիածնում կայացած հանդիպման ժամանակ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն ՀՀ ԱՎԾ-ն սպասում է Եկեղեցու արձագանքին գովազդային պաստառներ և բրոշյուրներ Եկեղեցուն տրամադրելու, ինչպես նաև այլ եղանակով հավատացյալներին հորդորելու անմիջականորեն և անկաշկանդ մասնակցելու մարդահամարին :
8. ԱՄՆ Հաշվառումների բյուրոյի փորձագետների առաջարկությամբ և աջակցությամբ Facebook սոցիալական կայքում բացվել է Մարդահամար 2011 խորագրով հատուկ էջ, որի միջոցով տարածվում է նաև վերը թվարկված գովազդային բոլոր գործիքները:

